ՀԱՍԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ - 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՄԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇՃԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
205

ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES
205

ԵՐԵՎԱՆ - 2020

ՀՏԴ 016:93/94
ԳՄԴ 91.9:63
Հ 422

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ՀՀ ԳԱԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

Մատենագիտությունը կազմել են
Համո Սուքիասյանը և Լիլիթ Գրիգորյանը

Հարությունյան Համլետ Մալխասի

Հ 422 Կենսամատենագիտություն / կազմողներ՝ Հ.Կ. Սուքիասյան, Լ.Մ. Գրիգորյան.– Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020.– 31 էջ:

Գրքույկն ընդգրկում է անվանի պատմաբան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Հարությունյանի (1948–2020) կենսամատենագիտությունը՝ նրա գիտական գործունեությունը բնութագրող համառոտ ակնարկով:

ՀՏԴ 016:93/94
ԳՄԴ 91.9:63

ISBN 978-9939-860-94-7
© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020
© Կազմողներ, 2020

ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԳԻՏԱԿԱԶՄԱԿԵՐՊԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համլետ Մալխասի Հարությունյանը հայկական պատմագիտության բնագավառում լուրջ ներդրում և մանկավարժական մեծ վաստակ ունեցող պատմաբան-մանկավարժներից էր: Անվանի պատմաբանը Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի երկարամյա աշխատակիցներից ու հիմնասյուներից էր:

Ծնվել է 1948 թ. սեպտեմբերի 25-ին Հայկական ԽՍՀ Սևանի շրջանի (այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի) Լճաշեն գյուղում՝ ծառայողի ընտանիքում: 1954–1966 թթ. սովորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, իսկ 1973 թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը:

Հ. Հարությունյանը 1969–1978 թթ. Սևանի շրջանի Գեղամավան և Լճաշեն գյուղերի միջնակարգ դպրոցներում աշխատել է որպես պատմության ուսուցիչ, ապա՝ ուսումնական մասի վարիչ: 1978 թ. հունիս-դեկտեմբերին ավագ գիտաշխատող է եղել Հայաստանի ազգագրության պետական թանգա-

ռանում, ապա 1978 թ. դեկտեմբերից՝ Հայկական ԽՍՀ Գիտությունների ակադեմիայի պատմության ինստիտուտում՝ նախ Հին դարերի պատմության բաժնում, իսկ 1979 թ. կեսերին տեղափոխվել է Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պատմության բաժին:

Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի պատմության խորագիտակ մասնագետ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վլադիմիր Ղազախեցյանի ղեկավարությամբ Հ. Հարությունյանը 1982 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն [«Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը, ստեղծագործական ակտիվությունը)»], իսկ 1991 թ.՝ դոկտորական ատենախոսություն («Հայաստանի բանվոր դասակարգը 1940–1950-ական թվականներին»): 2005 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում:

Հ. Հարությունյանը փորձառու վարչական աշխատող էր. 1994–2020 թթ. նա Գավառի պետական համալսարանի Պատմության ամբիոնի վարիչն էր: 2003–2005 թթ. կատարել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայաստանի Առաջին Հանրապետության պատմության բաժնի վարիչի պարտականությունները, իսկ 2010 թ. հուլիսից մինչև 2020 թ. հուլիսը Նորագույն պատմության բաժնի վարիչն էր: Նա երկար տարիներ Պատմության ինստիտուտի և Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդների, ՀՀ ԲՈԿ-ի 004 «Հայոց պատմություն» մասնագիտական խորհրդի, նաև Պատ-

մության ինստիտուտի «Հայոց պատմության հարցեր» և «Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու» տարեգրքերի խմբագրական խորհուրդների անդամ էր:

Չափազանց լայն էր պրոֆ. Հարությունյանի գիտական հետաքրքրությունների շրջանակը: Նա ուսումնասիրություններ է հրատարակել հին ու միջին դարերի, նոր և նորագույն ժամանակաշրջանների տարբեր հիմնախնդիրների վերաբերյալ: Այդուհանդերձ, նրա գիտական վաստակը մեծապես դրսևորվել է Հայաստանի XIX և XX դարերի պատմության ուսումնասիրության բնագավառում՝ ժողովրդագրական գործընթացներ, հասարակության սոցիալ-դասակարգային կառուցվածք, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիր, Նոր Բայազետի գավառի պատմություն և այլն:

Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգի պատմությանը նվիրված մենագրություններում[1] Հ. Հարությունյանը համակողմանի վերլուծում է 1938–1960 թթ. (խորհրդային տարիներին այս ժամանակահատվածը բնորոշվում էր իբրև «սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջան») ՀԽՍՀ բանվոր դասակարգի քանակական ու որակական, սեռատարիքային և ազգային կազմի փոփոխությունները, գործնական ակտիվությունը, Հայկոմկուսի կողմից բանվորների շրջանում իրականացվող գաղափարական աշխատանքնե-

---

[1] Տե՛ս Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը). Եր., 1983. Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.). Երևան, 1987:

ը և հարակից այլ հարցեր: Հարկ է փաստել, որ այդ ժամանակաշրջանով զբաղվող մասնագետների համար վերոգրյալ ուսումնասիրություններն առայսօր կարևոր ու օգտակար են:

Արցախյան հարցի վերազարթոնքի և հատկապես Արցախյան պատերազմի շրջանում հայ պատմագիտության համար առանցքային խնդիր էր հիմնահարցի համակողմանի ուսումնասիրությունը և քարոզչական դաշտում ադրբեջանական կեղծիքների բացահայտումը: 1980-ական թվականների վերջերից հայ պատմաբանները բազմաթիվ ուսումնասիրություններ են հրատարակել Արցախի պատմության վերաբերյալ: Այդ աշխատանքների շարքում կարևոր տեղ ունի Հ. Հարությունյանի «Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ.» մենագրությունը[2], որտեղ լուսաբանված է այդ ժամանակահատվածում Արցախում հայկական իշխանության մարմինների ձևավորման գործընթացը, երկրամասի հայության համագումարները, թուրքերի և ադրբեջանցիների դեմ հայության համառ պայքարը, Արցախի հարցում Անտանտի տերությունների ու Խորհրդային Ռուսաստանի քաղաքականությունը, Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու գործընթացը: Պատմաբանների կողմից այս աշխատությունը, իրավամբ, համարվում է արցախյան թեմատիկայով հայրենական պատմագիտության առանցքային ուսումնասիրություններից մեկը: Այն հրատարակվել է նաև անգլերենով:

---

[2] Տե՛ս Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Երևան, 1996:

Պատմական երևույթների ընկալման առումով ամենևին էական չէ հանրության համար ակնհայտ դարձնել ներկայի գերազանցությունն անցյալի նկատմամբ, առավել կարևոր է ապագայի կանխազգացողությունը: Պատմությունը երբեք չի ընդունում դժվարությունը որպես արդարացում: Սա անչափ կարևոր նկատառում է: Պատմության ճանապարհին մեր կորցրածն ավելի շատ է, քան գտածը: Բայց այդ քիչն էլ շատ ավելի թանկ է, քան այն, ինչ կար և այսօր չկա: Իսկ եղածի կայացման ընթացքը, որի ամբողջական շարունակությունն է ներկան, հարկ է, որ գիտակցվի: Ահա այս նպատակի իրագործման ճանապարհին Հ. Հարությունյանի երկար տարիների աշխատանքի արդյունքը՝ Երևանի նահանգի Նոր Բայազետի գավառի ամբողջական պատմությունը (1828–1930 թթ.), կարևոր քայլ է: Հրապարակի վրա են հեղինակի «Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ.» (նաև անգլերենով), «Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ.» և «Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ.» հիմնարար մենագրությունները[3]: Այս աշխատություններում հարուստ աղբյուրագիտական նյութի օգտագործմամբ ներկայացված է գավառի պատմությունը՝ սկսած Արևելյան Հայաստանը Ռուսական կայսրությանը միանալուց մինչև 1930 թ. Խորհրդային Հայաստանում գավառների փոխարեն շրջանների ստեղծումը: Ընդգրկուն է բարձրացված հարցերի շրջանակը՝ Ռուսաստանի ռազմավարության համա-

[3] Տե՛ս Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ., Երևան, 2008, Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ. Երևան, 2012, Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Երևան, 2015:

տեքստում նորագրավյալ երկրամասի վարչաժողովրդագրական հիմնախարց, գավառի վարչատարածքային կառուցվածք, ժողովրդագրական տեղաշարժեր, բնակչության թվաքանակ, ազգային, էթնոդավանաբանական, սեռատարիքային, սոցիալ-տնտեսական, հոգևոր-եկեղեցական, կրթամշակութային, Հայոց ցեղասպանությունից մազապուրծ արևմտահայ փախստականների ու որբերի՝ գավառում տեղավորման, նրանց խնամքի կազմակերպման աշխատանքներ, Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Հայաստանի կազմում գավառի ունեցած դերն ու նշանակությունը և այլ հարցեր, որոնց խոր ու համակողմանի վերլուծությունը ստեղծում է Նոր Բայազետի գավառի ամբողջական պատկերը: Նկատենք, որ այս խնդիրները լուսաբանվում են Արևելյան Հայաստանի, հաճախ նաև Անդրկովկասի պատմության համապատկերի վրա:

Երևույթների զարգացման ներքին պատճառական կապերի բացահայտման ընթացքում խիստ կարևորվում են տարբեր ժամանակներն ու հանգամանքները միմյանց համադրելու, փաստական հարուստ նյութը շրջանառության մեջ դնելու հաջողված փորձերը: Այս դեպքում էլ ընդհանուր շարադրանքում օգտագործված բազմաթիվ վավերագրերի, վիճակագրական նյութերի գործածությունն ու տարածաշրջանի մասին ամբողջական ժողովրդագրական պատկերի ստեղծումը, որն անգնահատելի է ընդգրկման ծավալով ու խորքով, այս աշխատությունների միակ արժանիքը չէ: Այս առումով խիստ կա-

ռևոր է այս ամբողջական համակարգված նյութերից, տեքստից բխող գաղափարը, իսկ դա այն է, ինչ անհրաժեշտ է սերունդներին:

Նոր Բայազետի մասին անվանի պատմաբանի հատորները կարող են սեղանի գիրք լինել յուրաքանչյուր գեղարքունիքցու համար, նաև նախադեպ դառնալ Հայաստանի այլ տարածաշրջանների պատմությունը շարադրելիս:

Վերջին տարիներին պրոֆ. Հ. Հարությունյանն աշխատում էր «Երևանի նահանգը 1849–1917 թվականներին» վերնագրով մենագրության վրա, որտեղ ներկայացվելու էր նահանգի ստեղծման, նրա վարչատարածքային կառուցվածքի, հասարակական-քաղաքական, սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման հիմնահարցերը: Այս նահանգի պատմությունը պատմագիտության կողմից մինչ օրս չի ենթարկվել համապարփակ հետազոտության: Ցավոք, նա չկարողացավ հրատարակված տեսնել սույն աշխատությունը:

Հ. Հարությունյանը սկզբունքային պատմաբան և բարեխիղճ գիտական ղեկավար էր: Նրա ղեկավարությամբ թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել հինգ պատմաբան, եղել է թեկնածուական և դոկտորական մի շարք ատենախոսությունների ընդդիմախոս: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կողմից հրատարակության պատրաստված «Հայոց պատմության» նոր ակադեմիական հրատարակության IV հատորի երկու գրքերում (որից վերջինի պատասխանատու խմբագիրն է) տեղ են գտել նաև անվանի պատմաբա-

նի հեղինակած տեքստերը: Նա ուսումնական դասագրքերի համահեղինակ է:

Հարությունյանը մանկավարժական-դասախոսական աշխատանքի ավելի քան 40 տարվա կենսագրություն ուներ: Բացի Գավառի պետական համալսարանից, նա դասախոսել և հատուկ դասընթացներ է վարել Երևանի պետական համալսարանում, Հայաստանի ազգային ագրարային համալսարանում, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում, «Գլաձոր» և «Հրաչյա Աճառյան» համալսարաններում, ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի մագիստրատուրայում: Այս ուսումնական հաստատություններից մի քանիսում, նաև Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանում բազմիցս եղել է ավարտական քննական հանձնաժողովների նախագահ:

Հ. Հարությունյանը մասնակցել է հայագիտական միջազգային բազմաթիվ գիտաժողովների, նախագահել է դրանց տարբեր մասնաճյուղերը, հանդես է եկել ուշագրավ զեկուցումներով:

Տարիների ի վեր շփվելով, համատեղ աշխատելով անվանի պատմաբանի հետ, համոզվել ենք, որ նա իր քաղաքացիական, մարդկային ու բարոյական անուրանալի արժանիքներով՝ պարզությամբ, բարությամբ, ձեռք մեկնելու պատրաստակամությամբ, սրտացավ վերաբերմունքով մեծ հեղինակություն էր վայելում ընկերական ու գիտական-մտավորական միջավայրում: Ավելացնենք նաև, որ Հ. Հարությունյանն ըն-

տանիքի նվիրյալ էր, հոգատար ամուսին, երկու զավակների հայր, չորս թոռների պապ: 2020 թ. հուլիսի 5-ին նրա վաղաժամ մահը անդարմանելի վիշտ է ընտանիքի, հարազատների, ընկերների ու գործընկերների համար:

Պրոֆեսոր Համլետ Հարությունյանի կորստով հայ պատմաբանների համայնքը կորցրեց իր հեղինակավոր ներկայացուցիչներից մեկին:

ԱՆՈՒՇԱՎԱՆ ՋԱՔԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՁԵՌՆԱՐԿՆԵՐ, ԴԱՍԱԳՐՔԵՐ

1983

1. Հայկական ՍՍՀ բանվոր դասակարգը սոցիալիզմի ամրապնդման և զարգացման ժամանակաշրջանում (քանակը, կազմը), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, 160 էջ:

1987

2. Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը (1938–1960 թթ.), Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1987, 244 էջ:

1996

3. Լեռնային Ղարաբաղը 1918–1921 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1996, 299 էջ:

2006

4. Մեթոդական ցուցումներ «Հայոց պատմություն» դասընթացի հեռակա ուսուցման ստուգողական աշխատանքների համար, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2006, 25 էջ:

2008

5. Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2008, 294 էջ:

6. Հայոց պատմություն, Նորագույն շրջան, դասագիրք 9-րդ դասարանի համար, խմբագրությամբ Վ. Բարխուդարյանի, Եր., «Մակմիլան-Արմենիա», 2008, 192 էջ (համահեղինակ):

2012

7. Նոր Բայազետի գավառը 1914–1920 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2012, 434 էջ:

2014

8. Հայոց պատմություն, Նորագույն շրջան, դասագիրք 9-րդ դասարանի համար, խմբագրությամբ Վ. Բարխուդարյանի, Եր., «Մանմար», 2014, 192 էջ (համահեղինակ):

2015

9. Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 278 էջ:

2019

10. Mountainous Karabagh in 1918–1921, Yerevan, "Gitutyun" publishing house of the NAS RA, 2019, 299 p.
11. Հայոց պատմություն (նորագույն շրջան), մաս I. Դասագիրք հանրակրթական դպրոցի 9-րդ դասարանի համար, Եր., «Մանմար», 2019, 104 էջ (համահեղինակ):

12. The County of Nor Bayazet 1828–1913, Yerevan, "Gitutyun" publishing house of the NAS RA, 2020, 291 p.
13. Երևանի նահանգի վարչաժողովրդագրական պատկերը, արհեստներն ու առևտուրը, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, 241 էջ:

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐ, ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1981

1. ՀՍՍՀ կոլտնտեսային գյուղացիությունը բանվոր դասակարգի համալրման աղբյուր (1939–1959), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1981, № 9, էջ 15–24:
2. ՀՍՍՀ բանվոր դասակարգի կառուցվածքային տեղաշարժերը (1930-ական թվականների երկրորդ կես – 50-ական թվականների վերջ), «Բանբեր Հայաստանի արխիվների», 1981, № 2, էջ 72–79:

1982

3. Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը, «Միասնական ընտանիքում (հոդվածների ժողովածու)», Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1982, էջ 48–82 (համահեղինակ՝ Մ. Գրիգորյան):

1985

4. Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը Մեծ հայրենականի տարիներին, «Բանբեր Հայաստանի արխիվների», 1985, № 1, էջ 165–173:

1986

5. ՀՍՍՀ բանվոր դասակարգի որակական փոփոխությունները (1940–1960 թթ.), ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 8, էջ 8–16:

1989

6. ՀԽՍՀ բանվոր դասակարգի նյութական կացությունը (1940–1960), ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1989, № 4, էջ 38–45:

1996

7. Արցախը Անգլիայի քաղաքականության ոլորտում, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 1996, № 1, էջ 56–58:
8. Շուշիի գունդը, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 1996, № 1, էջ 59–61:

1997

9. Հայկական զորամասերի մուտքը Ղարաբաղ, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 1997, № 2, էջ 150–152:
10. Զանգեզուրյան գոյապայքարը 1919 թ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 1997, № 2, էջ 153–156:

Կնոջ հետ

Ակադեմիկոս Վլադիմիր Բարխուդարյանի և հարազատների հետ

Գավառի պետական համալսարանի գործընկերների հետ (2009 թ.)

Գասպար Կիրակոսյան, Համլետ Հարությունյան, Վաչե Հովակիմյան, Մովսես Գևորգյան, Ռուբեն Ազիզբեկյան, Կլիմենտ Հարությունյան (2009 թ.)

Կլիմենտ Հարությունյան, Աշոտ Մելքոնյան, Կարեն Խաչատրյան,
Արտաշես Շահնազարյան, Համլետ Հարությունյան, Գառնիկ Գալստյան (2010 թ.)

Զինվոր թոռան՝ Համլետի հետ

Գործընկերների հետ Տաթևի վանքի բակում (2011 թ.)

Մարտիկ Բաղդասարյան, Ալբերտ Խառատյան, Էդուարդ Դանիելյան, Կարեն Խաչատրյան (Աղվերան, 2014 թ.)

Գառնիկ Գալստյան, Ռուբեն Սահակյան, Վահան Տեր-Ղևոնդյան, Համլետ Հարությունյան, Էդուարդ Դանիելյան (Աղվերան, 2014 թ.)

Պատմության ինստիտուտի երիտասարդական գիտաժողովի մասնակիցների հետ (Աղվերան, 2017 թ.)

Արմեն Մարուքյան, Արման Կիրակոսյան, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա, Վլադիմիր Վարդանյան, Համլետ Հարությունյան (Անթիլիաս, 2018 թ.)

Գևորգ Ստեփանյան, Արմեն Մարուքյան, Սուրեն Սարգսյան, Համլետ Հարությունյան, Վահան Մելիքյան, Վահրամ Բալայան (Անթիլիաս, 2018 թ.)

Պատմության ինստիտուտի տնօրինության նիստում (2018 թ.)

Նորագույն պատմության բաժնի աշխատակիցների հետ (2018 թ.)

Ռուբեն Սահակյան, Համլետ Հարությունյան, Աշոտ Մելքոնյան (Սոթք)

Ռուբեն Սահակյան, Դավիթ Գասպարյան, Համլետ Հարությունյան, Վահան Մելիքյան, Աշոտ Հայրունի (Ստեփանակերտ)

1999

11. Հայ-ադրբեջանական հարաբերությունները և մեծ տերությունները (1918–1920 թթ.), «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 1999, № 3, էջ 32–35:

2000

12. 10-րդ դարի նորահայտ վիմագիր արձանագրություն Գեղարքունիքի մարզի (Սևանի ենթաշրջան) Վարսեր գյուղից, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2000, № 4, էջ 25–27:
13. Լճափ գյուղը և նրա նորահայտ արձանագրությունները, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2000, № 4, էջ 28–32:

2001

14. Խորհրդային Հայաստանի բնակչությունը 1939–1959 թթ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2001, № 5, էջ 31–34:

2004

15. Էթնոժողովրդագրական իրավիճակը Նոր Բայազետի գավառում 18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին, «Հայաստանի պատմական ժողովրդագրության հիմնահարցեր. Հայկական լեռնաշխարհը հայ էթնոսի բնօրրան», Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2004, էջ 49–52:

16. Հրաչիկ Սիմոնյան. Ազատագրական պայքարի ուղիներում, չորս գրքով, գիրք I, II, Երևան, «Հայագիտակ» հրատ., 2003, 1574 էջ, ՀՀ ԳԱԱ «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 3, էջ 270–275 (համահեղինակ՝ Ա. Հակոբյան):

2007

17. Իշտիկունի-Պորտակ-Լճաշեն գյուղի համառոտ պատմությունը (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2007, № 9, էջ 87–97:
18. ՀՀ Դաշնակցությունը Ղարաբաղի համար մղված մարտերում 1918–1920 թթ., «Շուշին Հայոց քաղաքակրթության օրրան», Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2007, էջ 133–150:

2010

19. Պայքարը Լեռնային Ղարաբաղում [1918–1920 թթ.], Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին, Եր., «Զանգակ-97», 2010, էջ 191–203:

2011

20. Հայ Յեղափոխական Դաշնակցությունը Ղարաբաղի համար մղվող պայքարում 1917–1920 թթ., «Հայ Յեղափոխական Դաշնակցության հիմնադրման 115 և 120-ամյակներին նվիրված գիտաժողովների նյութեր», Եր., «Հայ դատ» հիմնադրամ, 2011, էջ 56–66:

21. 1920 թ. մայիսյան ապստամբությունը Նոր Բայազետի գավառում, ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2011, № 3, էջ 77–93:
22. Հանրապետական գիտաժողով՝ նվիրված 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 90-ամյակին, ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2011, № 3, էջ 270–275 (համահեղինակ՝ Ա. Զաքարյան):
23. Ղազախեցյան Վլադիմիր Նահապետի. կենսագրություն և գիտական գործունեություն, «Ղազախեցյան Վլադիմիր, Կենսամատենագիտություն», Եր., Պատմության ինստիտուտ, 2011, էջ 3–12:
24. ՀԽՍՀ բնակչության սոցիալական կացությունը 1940–1960-ական թվականներին, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2011, № 13, էջ 152–164:

2012

25. Թուրք-թաթարական խռովությունները Նոր Բայազետի գավառում 1918–1920 թթ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2012, № 14, էջ 198–211:
26. Զեմստվոներ ստեղծելու գործընթացը Անդրկովկասում և Երևանի նահանգում 1917–1920 թթ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2012, № 14, էջ 211–222:

2013

27. Շուշին Արցախյան գոյապայքարում (1918–1920 թթ.), ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2013, № 1, էջ 22–43:
28. Դրոն Լեռնային Ղարաբաղում (1920 թ. ապրիլ–մայիս), «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2013, № 15, էջ 176–186:
29. Шуши как столица де-факто независимого Арцаха (1918–1920 гг.), «Рабочие тетради» ИНСИ МО РА, 2013, № 1–2, с. 169–184.

2014

30. Մեծ հայը, «Հրանտ Հակոբյան՝ հավերժի ճամփորդ», գիրք Ա, Եր., «Գիր», 2014, էջ 105–110:
31. Նոր Բայազետի գավառի հայության մասնակցությունը Առաջին աշխարհամարտին, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2014, № 1, էջ 232–240:
32. Նոր Բայազետի (Սևան) գավառի բնակչությունը 1921–1930 թթ., ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2014, № 3, էջ 96–108:

2015

33. Շուշիի հայության կոտորածները (1919 թ. հունիս և 1920 թ. մարտ), «Բանբեր հայագիտության», 2015, № 1, էջ 50–69:

34. Նոր Բայազետի գավառը Խորհրդային Հայաստանի վարչատարածքային բաժանումներում (1920–1930 թթ.), ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2015, № 2, էջ 166–184:
35. Նոր Բայազետի գավառը 1921 թ. փետրվարյան ապստամբության ընթացքում, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 2015, № 2, էջ 104–123:
36. Խորհուրդների կազմավորումը Նոր Բայազետի (Սևանի) գավառում (1920–1930 թթ.), «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2015, № 2, էջ 121–132:
37. Փոխադարձ օգնության կոմիտեների (ՓՕԿ) գործունեությունը Նոր Բայազետի գավառում (1921–1929 թթ.), «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2015, № 2, էջ 133–141:

2016

38. Ագրարային փոփոխությունները Նոր Բայազետի գավառում 1921–1929 թթ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2016, № 3, էջ 124–153:
39. Արդյունաբերությունը [1945–1965 թթ.], Հայոց պատմություն, հ. IV, գիրք երկրորդ, Եր., «Զանգակ», 2016, էջ 5–17:
40. Սոցիալական տեղաշարժերը [1945–1965 թթ.], Հայոց պատմություն, հ. IV, գիրք երկրորդ, Եր., «Զանգակ», 2016, էջ 29–37:

41. Բնակչության սոցիալական կացությունը [1945–1965 թթ.], Հայոց պատմություն, հ. IV, գիրք երկրորդ, Եր., «Զանգակ», 2016, էջ 37–52:

2017

42. Ֆելիքս Մովսիսյան (ծննդյան 65-ամյակի առթիվ), ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2017, № 2, էջ 272–276 (համահեղինակ՝ Ա. Զաքարյան):
43. Նշանավոր պատմաբան Վլադիմիր Ղազախեցյանի գիտակազմակերպչական գործունեությունը, «Հայոց պատմության հարցեր», 2017, № 18, էջ 3–11:
44. Պատմագիտության նավավարը, «Վլադիմիր Բարխուդարյան – 90», Եր., Պատմության ինստիտուտ, 2017, էջ 214–216:

2018

45. Արցախի հիմնահարցը 1917–1920 թթ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2018, № 5, էջ 140–154:
46. Նոր Բայազետի գավառը 1920 թ. մայիսյան ապստամբության համատեքստում, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2018, № 5, էջ 155–175:
47. Երևանի նահանգի ֆաբրիկա-գործարանային արդյունաբերությունն ըստ 1900 թ. վիճակագրության տվյալների, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդված-

ների ժողովածու», 2018, № 5, էջ 176–188 (համահեղինակ՝ Ս. Սիմոնյան):

48. Երևանի նահանգի գյուղատնտեսությունը ըստ 1899 թ. վիճակագրական տվյալների, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2018, № 5, էջ 189–202 (համահեղինակ՝ Մ. Սաղաթելյան):
49. Արցախը Անդրկովկասում տերությունների աշխարհաքաղաքական հակամարտությունների համատեքստում (1918–1920 թթ.), «Արցախը հայոց պետականության համար պայքարի քառուղիներում: Միջազգային գիտաժողով, 2018 թ. փետրվարի 23: Զեկուցումների ժողովածու», Եր., Պատմության ինստիտուտ, 2018, էջ 80–98:

2019

50. Առողջապահությունը Երևանի նահանգում ըստ 1891 թ. վիճակագրական տվյալների, «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2019, № 6, էջ 135–143 (համահեղինակ՝ Մ. Սաղաթելյան):
51. Երևանի և Նախիջևանի խանությունների վարչական կառուցվածքը և կառավարումը Ռուսաստանին միանալուց մինչև 1849 թ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2019, № 7, էջ 106–118:

2020

52. Հայրենական մեծ պատերազմի անխոնջ տարեգիրը (Կլիմենտ Հարությունյանի 80-ամյակի առթիվ), ՀՀ ԳԱԱ

«Լրաբեր հասարակական գիտությունների», 2020, № 2, էջ 308–314:
53. ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչությունը 2010–2016 թթ., «Գավառի պետական համալսարան: Գիտական հոդվածների ժողովածու», 2020, № 8 (համահեղինակ՝ Բ. Սաքեյան):

ԽՄԲԱԳՐԱԾ ԳՐՔԵՐ*

1. Ղազախեցյան Վլադիմիր, Հայաստանը 1920–1940 թթ., Եր., Պատմության ինստիտուտ, 2006, 564 էջ:
2. Խաչատրյան Կարեն, Հայաստանը ԽՍՀՄ ռազմաարդյունաբերական համալիրի համակարգում (1922–1991 թթ.), Եր., Պատմության ինստիտուտ, 2015, 345 էջ:
3. Հակոբյան Արարատ, Միակուսակցական վարչակարգի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Եր., Պատմության ինստիտուտ, 2016, 366 էջ:
4. Հայոց պատմություն, հ. IV, գիրք երկրորդ. Նորագույն ժամանակաշրջան (1945–1991 թթ.), Եր., «Զանգակ», 2016, 800 էջ:
5. Աբրահամյան Հենրիկ, Հայաստանի անկախացման հասարակական-քաղաքական նախադրյալները և կայացման սկիզբը (1956 թ. փետրվար – 1991 թ. սեպտեմբեր), Եր., ԵՊՀ հրատ., 2019, 398 էջ:

* Ցանկն ամբողջական չէ:

ՂԵԿԱՎԱՐԱԾ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Կոխլիկյան Արամայիս, Սոցիալ-տնտեսական փոփոխությունները Հայկական ԽՍՀ գյուղում 1945–1965 թվականներին, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2006:
2. Վիրաբյան Հայկ, Սոցիալական փոփոխությունները Խորհրդային Հայաստանում 1920–1930-ական թվականներին, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2007:
3. Ավագյան Գոհար, Միքայել Պապաջանյանի հասարակական-քաղաքական գործունեությունը, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2009:
4. Կիրակոսյան Մարիամ, Պետական և հասարակական հաստատությունների որբախնամ գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում, Հյուսիսային Կովկասում և Անդրկովկասում, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2011:
5. Հովհաննիսյան Արծրուն, Բանակաշինությունը Հայաստանի Հանրապետությունում 1992–2010 թթ., Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2014:

6. Մարտիրոսյան Հայկ, Հովհաննես Քաջազնունու հասարակական-քաղաքական գործունեությունը, Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն (ընթացքի մեջ է):
7. Գրիգորյան Լիլիթ, Խորհրդային Հայաստանի գյուղացիությունը 1920–1930-ական թվականներին. (պատմաժողովրդագրական ուսումնասիրություն), Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսություն (ընթացքի մեջ է):

ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Григорян М., Худавердян К., *Г.М. Арутюнян. Рабочий класс Армянской ССР в период упрочения и развития социализма (численность, состав), Изд-во АН Армянской ССР, Ереван, 1983, 158 с.*, «Вестник общественных наук» АН АрмССР, 1984, № 2, с. 99–100.
2. Հակոբյան Ա., *Հ.Մ. Հարությունյան. Նոր Բայազետի գավառը 1828–1913 թթ. (Հայկական մատենաշար Գալուստ Գյուլբենկյան հիմնարկության), Երևան, «Գիտություն» հրատ., 2008, 294 էջ,* ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2008, № 2, էջ 256–258:
3. Հակոբյան Ա., *Համլետ Հարությունյան. Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 278 էջ,* ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», 2016, № 1, էջ 238–240:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

1. Հարությունյան Համլետ Մալխասի. Ով ով է. հայեր: Կենսագրական հանրագիտարան, հ. 1, Երևան, 2005, էջ 634:
2. Ղազախեցյան Վլադիմիր, Սուքիասյան Համո. Սկզբունքային պատմաբանը (պրոֆ. Համլետ Մալխասի Հարությունյանի 65-ամյակը), ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2014, № 1, էջ 290–292:
3. Զաքարյան Անուշավան, Սուքիասյան Համո. Համլետ Մալխասի Հարությունյան (ծննդյան 70 և գիտամանկավարժական գործունեության 40-ամյակի առթիվ), ՀՀ ԳԱԱ «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 2018, № 2, էջ 280–285:
4. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կայք, http://www.academhistory.am/upload/files/Hamlet_Haruunyan.pdf
5. Գավառի պետական համալսարանի կայք, gsu.am/hy/our_team/համլետ-մալխասի-հարությունյան/
6. «Վիքիպեդիա» ազատ հանրագիտարան, https://hy.wikipedia.org/wiki/Համլետ_Հարությունյան_(պատմաբան)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մնուշավան Զաքարյան, Համո Սուքիասյան.
Համլետ Հարությունյանի գիտակազմակերպչական գործունեությունը 3
Մենագրություններ, ձեռնարկներ, դասագրքեր 12
Գիտական հոդվածներ, գրախոսություններ 15
Խմբագրած գրքեր 25
Ղեկավարած ատենախոսություններ 26
Աշխատությունների մասին գրախոսություններ 28
Կենսագրական տվյալներ 29

ՀԱՄԼԵՏ ՄԱԼԽԱՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ГАМЛЕТ МАЛХАСОВИЧ АРУТЮНЯН

БИОБИБЛИОГРАФИЯ

HAMLET M. HARUTYUNYAN

BIOBIBLIOGRAPHY

Համակարգչային ձևավորումը՝ Ն. Ադամյանի
Համակարգչային շարվածքը՝ Լ. Գրիգորյանի
Տպագրիչ՝ Լ. Մուրադյան

Ստորագրված է տպագրության 18.09.2020 թ.
Տպաքանակը՝ 120 օրինակ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ИНСТИТУТ ИСТОРИИ НАН РА
INSTITUTE OF HISTORY OF NAS RA

ՀՀ, 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4
РА, 0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4
24/4, Marshal Baghramyan Ave., 0019, Yerevan
http://www.academhistory.am

ISBN 978-9939-860-94-7